Հաստատված է
«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
բաժնետերերի արտահերթ
ժողովի կողմից
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

11 հոկտեմբերի 2022թ.

«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՈՒ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Կանոնակարգը սահմանում է «ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող գործարքների արդյունքում Հաճախորդների հետ հնարավոր շահերի բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման ընթացակարգը:

1.2. Սույն Կանոնակարգն ուղղված է ապահովելու՝

1.2.1. Ընկերության Հաճախորդների շահերի գերակայությունն Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց անձնական շահերի նկատմամբ,

1.2.2. Ընկերության՝ Հաճախորդների հետ ազնիվ, անկողմնակալ և բարեխիղճ գործելու պարտավորությունների սահմանումը,

1.2.3. Հաճախորդի պատվերները հնարավոր լավագույն պայմաններով կատարելու՝ Ընկերության պարտավորության սահմանումը,

1.2.4. Շահերի բախման հնարավոր դեպքերի, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ռիսկերի կանխարգելումն ու բացառումը:

1.3. Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

Արժեթուղթ. Օրենքի 3-րդ հոդվածի 1-2-րդ, 5-7-րդ կետերով սահմանված գործիքները,

Գործադիր տնօրեն. Ընկերության միանձնյա գործադիր մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը,

Ընկերություն. «ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերություն ներդրումային ընկերությունը,

Խորհուրդ. Ընկերության կառավարման մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում իրականացնում է Ընկերության ընդհանուր ղեկավարումը,

Հաճախորդ. ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հետ Ընկերությունն ունի Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման գործող պայմանագիր,

Ներդրումային ծառայություններ. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ծառայությունները,

Շահերի բախում. սույն Կանոնակարգի 2-րդ կետում նշված դեպքերից մեկը,

Ոչ հիմնական ծառայություններ. Օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված ծառայությունները,

Պատվեր. ըստ Ընկերության՝ Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման կանոնները սահմանող ներքին իրավական ակտերում և/կամ Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրերում օգտագործվող նշանակության,

Սակագներ. Գործադիր տնօրենի կողմից կամ Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրերով հաստատված՝ Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների սակագները, որոնց համապատասխան Հաճախորդն Ընկերությանը վճարում է այդ ծառայությունների համար,

Օրենք. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը:

2. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ

2.1. Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող Շահերի բախման հնարավոր դեպքերն են՝

2.1.1. Հաճախորդին շուկայականից ավելի բարձր գնով Արժեթղթերի վաճառք Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց սեփական պորտֆելից՝ առանց հաշվի առնելու Հաճախորդի ներդրումային նպատակները և Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացված պատվերների էական պայմանները,

2.1.2. Հաճախորդին պատկանող Արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Ընկերությանը, Ընկերության աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,

2.1.3. Հաճախորդի միջոցների ներդրում Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող Արժեթղթերում, եթե այդ գործարքն իրականացվել է կամ իրականացվելու է Հաճախորդի համար ակնհայտ ոչ բարենպաստ

պայմաններով (non arms length basis),

2.1.4. Հաճախորդին պատկանող Արժեթղթերով Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող այլ գործարքներ շուկայական գներին չհամապատասխանող գներով կամ առանց հաշվի առնելու Հաճախորդի ներդրումային նպատակները, եթե տվյալ գործարքից կամ գործարքներից Ընկերությունը, Ընկերության աշխատակիցները և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձինք ստացել են կամ կարող են ստանալ շահ՝ ի վնաս Հաճախորդի,

2.1.5. Հաճախորդի վրա ճնշման գործադրում կամ այնպիսի խորհրդատվության մատուցում, որի արդյունքում կնքված գործարքները համապատասխանում են Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց շահերին, և այդպիսի խորհրդատվության արդյունքում Հաճախորդը կկրի վնասներ,

2.1.6. Հաճախորդի շահերին կամ Ընկերությանը հայտնի ռիսկի ախորժակին չհամապատասխանող գործարքների կնքում, որը նպատակ է հետապնդում ավելի մեծ ծավալներով միջնորդավճարների և այլ վճարների գանձում Հաճախորդից, եթե Հաճախորդը խելամիտ հնարավորություն ուներ ավելի քիչ միջնորդավճար վճարելով ստանալ համարժեք եկամուտ,

2.1.7. Ընկերությունում համապատասխան հաշիվներում հաշվառվող և ներդրումներ իրականացնելու համար նախատեսված՝ Հաճախորդի միջոցների կանխամտածված պահում Ընկերության սեփական առևտրային ակտիվ գործառնությունների իրականացման նպատակով,

2.1.8. էական նշանակություն ունեցող և Արժեթղթերի շուկայի գնագոյացման վրա ազդելու հնարավորություն ունեցող՝ Հաճախորդի կողմից ստացված ծառայողական տեղեկատվության օգտագործում ի շահ Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված անձանց:

2.2. Վերոնշյալ դեպքերի ցանկը սպառիչ չէ: Ընկերության ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել Ծահերի բախման նաև այլ՝ տեղական և միջազգային ֆինանսական շուկաներում լայնորեն ճանաչված դեպքերով:

3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

3.1. Ներդրումային ծառայություններ մատուցելիս Ընկերության համապատասխան իրավասություններ ունեցող աշխատակիցները պարտավոր են.

3.1.1. պահպանել տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջները,

3.1.2. Ընկերության և Ընկերության Հաճախորդների շահերը վեր դասել սեփական շահերից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են չհիմնավորված ու ակնհայտ բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի և/կամ Ընկերության շահերի վրա,

3.1.3. ապահովել ներդրողների (Հաճախորդների, գործընկերների և շուկայի այլ մասնակիցների) շահերի պաշտպանությունը,

3.1.4. իրենց իրավասությունների շրջանակներում տեղեկացնել անմիջական ղեկավարին ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին ընթացակարգերի հնարավոր խախտումների, ինչպես նաև այն գործառնությունների մասին, որոնց առնչությամբ Ընկերությունը ՀՀ օրենսդրությանը համաձայն կարող է դիտվել որպես շահագրգիռ անձ:

4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Ընկերությունը գործում է անկողմնակալության, շիտակության, ճշտապահության և Հաճախորդների Արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով: Այդպիսի տեղեկացման ձևը և կարգը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով:

4.2. Հաճախորդների պատվերները կատարելիս Ընկերությունը գործում է՝ ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանության նպատակից: Այդ առնչությամբ Ընկերության համապատասխան աշխատակիցները պարտավոր են.

4.2.1. չիրականացնել Հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնց միակ կամ հիմնական նպատակն է Ընկերության կողմից տվյալ Հաճախորդից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացումը,

4.2.2. Հաճախորդի պատվերի համաձայն գործարքներ կնքելիս շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու ժամանակ Հաճախորդի ակնհայտ շահերը համարել գերակա Ընկերության շահերի նկատմամբ,

4.2.3. Հաճախորդների պատվերներին համապատասխան իրականացվող գործարքներն իրականացնել մասնագիտական բարձր մակարդակով և հնարավոր լավագույն պայմաններով,

4.2.4. կնքել գործարքներ բացառապես Հաճախորդների հետ կնքված՝ Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրերով և այդ ծառայությունների մատուցումը կանոնակարգող՝ ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,

4.2.5. Սակագներով սահմանված չափով գանձել միջնորդավճարներ:

5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

5.1. Ներդրումային գործունեության իրականացման ընթացքում Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների միջև հնարավոր Շահերի բախման բացառման նպատակով Ընկերությունում իրականացվում են հետևյալ միջոցառումները.

5.1.1. Ընկերության աշխատակիցների, Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են բացառապես ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,

5.1.2. Ընկերությունն իրավասու է չկատարել Հաճախորդի Պատվերը (վերջինիս հնարավորինս շուտ տեղեկացնելու պայմանով), եթե Պատվերի կատարումը հակասում է ՀՀ օրենսդրության և/կամ Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին,

5.1.3. Ընկերության համապատասխան աշխատակիցներին արգելվում է կատարել Ընկերության սեփական գործարքները, նմանատիպ էական պայմաններով

ներկայացված՝ Ընկերության աշխատակիցների, Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատվերը Հաճախորդի պատվերից շուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործարքի կատարումը բխում է Հաճախորդի շահերից, և այն չի խոչնդոտում վերջինիս պատվերի կատարմանը: Ընկերության յուրաքանչյուր աշխատակից պետք է գիտակցի, որ Շահերի բախում կարող է առաջանալ այն դեպքում, երբ նրա անձնական գործունեությունը կամ շահերը բախվում կամ խոչընդոտում են, կամ կարող են բախվել և խոչընդոտել իր պարտավորություններին, որոնք էլ կարող են արգելք հանդիսանալ այլ աշխատակիցների, ղեկավարների կամ Հաճախորդների հետ արդյունավետ համագործակցությանը,

5.1.4. Ընկերության աշխատակիցներն իրավունք չունեն չարաշահել Ընկերությունում ունեցած իրենց դիրքը, պաշտոնը և անձնական նպատակներ հետապնդել կամ անձնական նպատակներով օգտագործել աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ ստացված տեղեկատվությունը: Ընկերության աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման՝ ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին,

5.1.5. Ընկերությունում առանձնացվել են գործարքների կնքման նպատակով Ընկերությանը ներկայացված Պատվերների ընդունման և ըստ ստացված Պատվերի համապատասխան գործարքն իրականացնող ստորաբաժանումների գործառույթները,

5.1.6. Ընկերության աշխատակիցներին արգելվում է Հաճախորդին տրամադրել խորհրդատվություն Արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու վերաբերյալ, որի միակ կամ հիմնական նպատակը շահերին ծառայող գործարքների կնքման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է, կամ որը հակասում է Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ ՀՀ օրենսդրության պահանջներին,

(5.1. կետը խմբ. 07.10.2022թ.)

5.2. Ընկերության և Ընկերության Հաճախորդների միջև հնարավոր Շահերի բախման կանխարգելման նպատակով Ընկերությունը՝

5.2.1. մշակել և հաստատել է Պատվերների ընդունման և կատարման, ինչպես նաև կնքված գործարքների հաշվառման ընթացակարգեր,

5.2.2. աշխատանքային պայմանագրերով հստակ սահմանել և հաստատել է

Ընկերության աշխատակիցների խնդիրներն ու գործառույթները և նշված գործառույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության միջոցներ,

5.2.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է ներկայացնել հաշվետվություններ Հաճախորդներին վերջիններիս Արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով իրականացված գործարքների վերաբերյալ: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկատվության կազմը սահմանվում է Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրերով և Ընկերության ներքին իրավական ակտերով, բայց չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության կազմից:

(5.2. կետը խմբ. 07.10.2022թ.)

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Ներդրումային ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված աշխատակիցները պարբերաբար հրահանգավորվում են սույն Կանոնակարգով, Ընկերության այլ ներքին իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ շահերի բախման կանխարգելմանն ուղղված միջոցառումների պահպանման հարցերով:

6.2. Ընկերության աշխատակիցները, անկախ զբաղեցրած դիրքից և պաշտոնից, պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, շահ հետապնդելուց կամ հարաբերություններից, որոնք հակասում են սույն Կանոնակարգում նշված սկզբունքներին և Ընկերության շահերին կամ կարող են դիտվել որպես դրանց հակասող կամ կարող են ազդել աշխատակցի՝ իր աշխատանքային պարտականությունների անաչառ ու ազնիվ կատարման վրա:

6.3. Սույն Կանոնակարգը չի վերաբերվում այն դեպքերին, երբ հակասության մեջ են գտնվում կամ կարող է այդպիսի հակասություն առաջանալ Ընկերության հաճախորդի ու Ընկերության, Ընկերության աշխատակիցների հետ չփոխկապակցված մեկ այլ հաճախորդի միջև:

(6.3. կետը խմբ. 07.10.2022թ.)

6.4. Ընկերության յուրաքանչյուր աշխատակից, որին իր իրավասությունների շրջանակում հայտնի է դարձել Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկած կամ հնարավոր Շահերի բախման մասին

տեղեկատվություն, պարտավոր է տեղեկացնել դրա մասին իր վերադասին, որն էլ իր հերթին տեղեկացնում է Ընկերության ներքին աուդիտի համար պատասխանատուին:
(6.4. կետը խմբ. 07.10.2022թ.)

6.5. Սույն Կանոնակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության բաժնետերերի ժողովի կողմից (եթե Ընկերությունում խորհուրդ չի ձևավորվել) և ուժի մեջ են մտնում ժողովի կողմից հաստատման պահից:
(6.5. կետը խմբ. 07.10.2022թ.)